

01.09.2017թ.

Մևան համայնքի ղեկավար Ս. Մուրադյանի շնորհավորանք-ուղերձը 2017-2018 ուսումնական տարվա կապակցությամբ

Միրելի՛ աշակերտներ, ուսանողներ,

Հարգարժան մանկավարժներ, կրթության բնագավառի ներկայացուցիչներ,

Հարգելի ծնողներ

Գիտելիքի և խաղաղության օրվա՝ Սեպտեմբերի 1-ի առթիվ ընդունեք իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքի ավագանու ամենաջերմ բարեմաղթանքներն ու շնորհավորանքները:

Մեկնարկում է 2017-2018 ուսումնական տարին, որը բարեփոխումների, կրթության ոլորտում իրականացվող ծրագրերի և նորարական ձեռնարկների առումով խոստանում է լինել հիշարժան և տարբերվող:

Մեր աշակերտների ու սովորողների առջև կրկին իրենց դռներն են բացել համայնքի հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցները, պետական քոլեջը, արհեստագործական ուսումնարանը:

Միրելի աշակերտներ, որքան էլ ամռան ամիսները հետաքրքիր էին և անհոգ, հավատացած եմ, որ նորի ակնկալիքով և անհամբերությամբ էիք սպասում նոր ուսումնական տարվան:

Միրելի 1-ին դասարանցիներ, շնորհավորում եմ ձեզ նորամուտը դպրոցներ: Օրը ձեզ համար ոչ միայն տոնական է, այլ նաև հուզիչ ու մի փոքր էլ անսովոր: Առաջին անգամ ոտք եք դնում մի օջախ, որտեղ պիտի անցնեն ձեր մանկության ու պատանեկության տարիները: Շնորհավորում եմ ձեզ և ձեր ծնողներին ձեր փոքրիկ կյանքի մեծ իրադարձության առթիվ:

Թող հետաքրքրությունը, սերն ու ձգտումը գրի ու դպրության, գրքի ու գիտելիքի հանդեպ լինեն անսպառ:

Նոր ուսումնական տարվա առթիվ շնորհավորանքներս եմ հղում համայնքի ուսանողներին: Շատերի համար այն հերթական ուսումնառության տարին է, մյուսների համար՝ կյանքի նոր շրջափուլի սկիզբը: Պատվով կրեք ուսանող անունը, ուսումնառության տարիները դարձրեք իմաստավորված, զինվեք գիտելիքների հարուստ պաշարով և առաջ գնացեք վստահ քայլերով:

Հարգելի մանկավարժներ, շնորհավորում եմ ձեզ նոր ուսումնական տարվա կապակցությամբ: Անկախ ձեր աշխատանքային կենսագրությունից ու փորձառությունից՝ սեպտեմբերի 1-ը ձեզ համար անկրկնելի է, սկիզբը նոր բացահայտումների, որը դուք դիմավորում եք անբացատրելի զգացողություններով:

Մաղթում եմ ձեզ առողջություն, բարեկեցություն, եռանդ, համբերություն և մասնագիտական նորանոր բարձունքներ:

Հարգելի համաքաղաքացիներ

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիս՝ Գիտելիքի և խաղաղության օրվա առթիվ: Գիտելիքն ու խաղաղությունը շողկապված են, որովհետև միայն խաղաղ պայմաններում է հնարավոր ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ և այդ գիտելիքները ի նպաստ դնել մեր երկրի բարօրության ու զարգացման գործին: Երկիրը ուժեղ է խելացի, գրագետ, պատրաստված մարդկանցով. ես ցանկանում եմ, որ այդ ուժի կրողը լինի ձեզանից յուրաքանչյուրը:

Մաղթում եմ գիտելիքներով, իմացությամբ, ձեռքբերումներով, նորանոր ձեռնարկներով ու ծրագրերով հազեցած տարի:

Թող այս սեպտեմբերի 1-ը լինի գիտելիքաառատ ուսումնական գործընթացի, իմացության, դպրոցապահպան ծրագրերի ու ձեռքբերումների լավագույն սկիզբը և հաջող մեկնարկը: